



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերձագործական համայնքներ
նշ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

22594

Ի. ՍԵԼՅԱՆԻՆ



ԿԱԶՄԱԿԵՐՊԵՆՔ
ՅԵՐԵԽԱՆԵՐԻ
ԱՇԽԱՏԱՆՔԸ
ԿՈՂԽՈԶՈՒՄ

331

U-36

ԽԱՅՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ. ԿԵՆՏՐՈՆ. ՇՐԱՏԱՐԱԿԶ. ՄՈՍԿՎԱ, 1931

30 JUL 2013

15 JAN 2010

331
V-36
u

Ի. ՍԵՅԱՆԻՆ

10.5.11.2010

ԿԱԶՄԱԿԵՐՊԵՆՔ
ՅԵՐԵՒԱՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ
ԿՈԼԽՈԶՈՒՄ

Քարգմ. Խ. Ռ.

1007
33682

138
251
N-36

ԵՍԶԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԴ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ 1981

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Յերեխաների աշխատանքը չկոլեկտիվացրած գյուղի պայմաններում	3
Յերեխաների աշխատանքի կազմակերպման հիմունքները կոլլեկտիվներում	6
Յերեխաների աշխատանքի կազմակերպման ձևերը	9
Պրոնեքները — յերեխաների աշխատանքի ղեկավարներն ու կազմակերպիչներն են	17
Բանվորական որվա նորմաները և աշխատանքի պաշտպանությունը	21
Յերեխաների աշխատանքի վճարը	25
Յերեխաների աշխատանքը կոլլեկտի տնտեսությունների և շահարկման մասերում	28
Դպրոցը և ուսուցիչը կոլլեկտիվում	31
ՎԵՐՁԱԲԱՆ	33

ՅԵՐԵՒԱՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԶԿՈԼԵԿՏԻՎԱՑՐԱԾ ԳՅՈՒՂԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ինչպես պետք է կազմակերպել յերեխաների աշխատանքը կոլլեկտիվներում, — նախքան այդ մասին խոսելը, հարկավոր է համառոտակի կանգ առնել չկոլեկտիվացրած գյուղերի յերեխաների վիճակի վրա:

Տնտեսական պայմանների շնորհիվ բատրակների և չքավորների յերեխաները ստիպված են լինում վաղ մանկական հասակից զբաղվել՝ ամենաաննշան վճարով՝ վարձու ծանր աշխատանքով: Բատրակային և չքավորական ընտանիքների վատ ապահովված լինելը, իրենց յերեխաներին տնտեսապես կախված վիճակում եր պահում նրանց վարձողներից, վորոնք սովորաբար չարաչար շահագործում եյին յերեխային, իմանալով, վոր նրա (յերեխայի) աշխատավարձից է կախված ընտանիքի գոյությունը: Այդ պատճառով էլ յերեխաները, չնայած աշխատանքի անտանելի պայմաններին, — այնուամենայնիվ ստիպված եյին լինում աշխատել:

ԽՍՀՄ աշխատանքային որենսդրությունը նախատեսում է մինչև 14 տարեկան հասակի յերեխայի աշխատանքի արգելումը, թուլատրելով բացառություն գյուղական վայրերի համար, ուր հասակը իջեցվում է մինչև 12-ի:

Չկոչելովագրած գյուղերում, գյուղատնտեսական աշխատանքով զբաղվող յերեխաների թիվը (թվերը 1926 թվի մարդահամարինն են, ավելի թարմ տվյալները չկան) հետևյալ պատկերն է ներկայացնում՝ հազարներով.

Մինչև 14 տարեկան յերեխաներ	Դրանցից մինչև 12 տարեկանները
Բատրակներ 56,0	7,0
Հովիվներ 107,8	17,2
Դայակ-յերեխաներ* . 75,4	17,6

Նույն այդ տվյալների համաձայն, 100 մարդուց այդ աշխատանքով զբաղվողների մեջ մանկահասակները կազմում էին՝

Մինչև 12 տարեկան	12 — 13 տարեկան
Բատրակներ 0,5	3,5
Հովիվներ և նրանց ոգնականներ . 3,0	15,8
Դայակ-յերեխաներ 8,0	26,2

Այս թվերը չափազանց մոտավոր են: Պակովի շրջանը հետազոտելիս պարզվեց, վոր 14.542 հարվեառված բատրակներից, 6.927 հոգի կազմում էին մանուկ բատրակներ, վորը անում է 47%:

Գյուղական աշխատանքի մեջ մանկական վարձու աշխատանքի նշագիծը մինչև անգամ մի քիչ աճում է, վոր հաստատվում է հետևյալ թվերով.

	1926 թ.	1927 թ.
100 բատրակին մանկահասակներ ընկնում էին 27,1		30,4
100 հովիվին մանկահասակներ ընկնում էին 19,4		22,4

* Դայակ-յերեխաները (няня) — ուսական գյուղում այն վարձվող յերեխաներն են (գերազանցապես աղջիկները), վորոնց հանձնվում է մանկիկներին խնամք տանելը, յերբ ծնողները զբաղված են գաղտային աշխատանքներով:

Գյուղատնտեսական աշխատանքի տեսչության, գյուղատնտեսական բանվորական կոմիտեյի, հոգատառ միության անբավարար ուշադրությունը դեպի վարձով աշխատող մանուկները, շատ հաճախ շահագործումը հասցնում էր մինչև այնտեղ, վոր նրանք հաճախ նույնիսկ առանց պայմանագրերի էին աշխատում:

Ունեցած տվյալների համաձայն մանկահասակ բատրակների 50% աղատ որ չեն ունեցել, 79% մանկահասակ դայակները աշխատում են 8 ժամից էլ ավելի: 135.000 հարվի առնված աղջիկ բատրակներից 130.000-ը աշխատում են որվա մեջ 10, յերբեմն 18 ժամ և միայն 4.000-ը 8 ժամ:

Պիոներական կազմակերպությունները բավարար չափով չէին ոգնում աշխատանքի որգաններին և պրոֆմիություններին՝ գյուղում մանուկների շահագործման դեմ նրանց մղած պայքարում. պիոներ ջոկատները հաճախ մինչև անգամ չէին էլ իմանում իրենց գյուղում վարձով աշխատող յերեխաների թիվը:

Բայց և այն ընտանիքներում, ուր յերեխաները ստիպված չէին լինում գնալ «մարդ դառնալու», շատ ծանր վիճակում էին գտնվում: Նրանք հանդիսանում էին բանվորական ձեռքեր, և անհնար էր առանց տնտեսությունը վնասելու նրանց ոգտագործելուց հրաժարվելը: Այդ պատճառով էլ մանկական աշխատանքը կիրառվում էր առանց ժամանակի սահմանափակման, առանց վորեք կերպ մանկական ուժերն ու հասակը հարվի առնելու:*

* Ոգտագործված է ընկ. Վիդգալովի «Известия ЦК ВЛКСМ»-ի սեպտեմբերի 30-ի № 18-ում հրատարակված հոդվածում բերված տվյալները:

Այս պայմանները յերեխաների զարգացման և ուսման վրա խիստ բացասական ազդեցութիւն ունեցան:

Իրենց ընտանիքում և կամ վարձով աշխատելիս, հաճախակի կտրվում էին դպրոցից, հնարավորութիւն չէին ունենում ինչպես հարկն և սովորել և ստիպված էին լինում հենց դպրոցի առաջին խկ խմբից դուրս գալ: Ել չենք խոսում այն մասին, վոր ուժից վեր աշխատելու հետևանքով, յերեխաները չէին կարող մասնակցել իրենց գյուղի քաղաքական և տնտեսական կյանքին, իրենց պիտոներ-Նոկատի աշխատանքներին և այլն:

ՅԵՐԵՒԱՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ԿՈՒՆՈՉՆԵՐՈՒՄ

Կոլխոզային շարժման զարգացման ներկա ետապին, յերբ կոլխոզի հիմնական ձևը հանդիսանում է գյուղատնտեսական արտելը, — կոլեկտիվացման հիմքում առաջին հերթին դրված է աշխատանքի, հողի և արտադրութեան հիմնական միջոցների հանրայնացումը:

Աշխատանքի և արտադրութեան հիմնական միջոցների հանրայնացումը նվազեցնում է ընտանիքի տնտեսական նշանակութիւնը, վորը անհատական տնտեսութեան պայմաններում արտադրական միավոր էր հանդիսանում:

Հասակավորների աշխատանքի կազմակերպումը սոցիալիստական սկզբունքների վրա, հնարավորութիւն է տալիս որակարգի հարց դարձնել մանկական աշխատանքի ճիշտ կազմակերպումը, վորպես հերթական և կարևոր խնդիրներից մեկը:

Կոլխոզներում բոլոր յերեխաների մասնակցութեան ճիշտ կազմակերպումը կոլխոզի արտադրական աշխա-

տանքում, — դպրոցի և պիտոներ-Նոկատի կարևորագույն խնդիրներից մեկն է:

Յերեխաների ճիշտ կազմակերպված աշխատանքը, բացի իր դաստիարակչական և քաղաքական նշանակութիւնից, հսկայական կարևորութիւն ունի նաև կոլխոզային վորակյալ կազրեր պատրաստելու տեսակետից:

Կոլխոզի պայմաններում յերեխաների աշխատանքը հանդիսանում է մասնուկների կոմունիստական դաստիարակութեան հիմնական միջոցներից մեկը: Այդ աշխատանքը պետք է ուսումնա-արտադրողական լինի, պիտի կոլեկտիվ աշխատանքի վարժեցնի նրանց, զարգացնի մատերիալիստական աշխարհայացք և Ֆիզիկապես դաստիարակի ու առողջացնի յերեխաներին:

Արտադրական աշխատանքը անպայմանորեն պիտի կապված լինի ուսման հետ: Հետևաբար, դպրոցը պետք է իր նախագծերը և ծրագրերը կառուցի սովորողների աշխատանքային բաղալի վրա:

Այդ անելիս պիտի հիշել, վոր յերեխաների աշխատանքը ճիշտ կազմակերպել կարելի յե միայն՝ յելնելով հետևյալ հիմնական դրութիւններին:

1. Յերեխաների աշխատանքի կազմակերպման հիմքում պետք և դրվի յերեխաների ինքնագործնելիութիւնը և նախաձեռնութիւնը գործնական աշխատանքների մեջ: Յերեխաները պետք է ակտիվ կերպով ջննարկեն տվյալ կոլխոզի գյուղատնտեսական արտադրութեան հիմնական հարցերը և իրենց մասնակցութիւնը այդ արտադրութեան մեջ:

2. Յերեխաների աշխատանքի կազմակերպման հիմնական մեթոդը պետք է լինի սոցիալիստական մրցումը, վորով յերեխաները ընդհուպ կմոտենան գյուղատնտեսական արտադրութեան լավագույն կազմակերպմանը և լավացմանը:

3. Արտադրական աշխատանքում յերեխաների մասնակցելը պետք է հիմնված լինի հետեյալի վրա. յերեխաները պիտի գիտակցեն և խիստ կարևոր համարեն իրենց մասնակցութունը կոլխոզային շինարարութեան ընդհանուր կոլեկտիվ աշխատանքի մեջ:

Յերեխաները, աշխատանքի մեջ, աստիճանաբար պիտի տիրապետեն խոշոր քանակութեամբ գիտելիքների և հմտութեան: Յերեխաների աշխատանքը անհրաժեշտ է կազմակերպել այնպես, վոր նա յերեխաների մեջ հետաքրքրութուն հարուցի դեպի աշխատանքը, և կառուցվի գյուղատնտեսական արտադրութեան առանձին տեսակների նկատմամբ ունեցած նրանց շահազրգոթեան վրա: Դրա համար անհրաժեշտ է հատուկ կուրսեր, կրթութիւններ հիմնել, հատուկ տեխնիկական և գյուղատնտեսական գրականութեան ընթերցումն կազմակերպել: Անհրաժեշտ է դեպի հարևան կոլխոզները կազմակերպել եքսկուրսիաներ նրանց արտադրութեան և աշխատանքի կազմակերպման հետ ծանոթանալու համար, ինչպես նաև դեպի հացահատիկային ֆաբրիկները, — սովխոզները և մոտակա արդյունաբերական կենտրոնները (դեպի գործարաններն ու ֆաբրիկները): Պետք է կարգավորել արտադրական փորձի փոխանակութունը պիոներների սուանձին բրիգադներին, շուկաների և դպրոցների միջև:

Անհրաժեշտ է այն աշխատանքներում, վորոնցում մասնակցում են յերեխաները, — բազմազանութուն մտցնել, վորպեսզի դեպի գյուղատնտեսական արտադրութունը խոշոր հետաքրքրութուն առաջանա, նպաստելով աշխատանքի արտադրողականութեան բարձրացմանը: Սակայն այդ խնդրում պետք է հետապնդել խիստ հետևողական աստիճանականութեան, այսինքն այնպես անել, վոր այն գործնական աշխատանքները, վոր կատարում են յերեխաները, աստիճանաբար, քայլ առ քայլ բարդանան:

ՅԵՐԵՒԱՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐԸ

Ամենից ավելի կարևոր հարցերից մեկը այժմ հանդիսանում է յերեխաների աշխատանքի կազմակերպման ձևերի հարցը:

Պետք է ասել, վոր յերեխաների աշխատանքը կազմակերպելու համար կոլխոզները մինչև վերջին ժամանակները փաստորեն վոչինչ չեն արել: Այդ պատճառով էլ, նույնիսկ հին կոլխոզներում, — արտելներում և կոմունաներում, — յերեխաների աշխատանքը միանգամայն չի կազմակերպված:

Հենց իրենց, կոլխոզնիկ-յերեխաների հազորած փաստերը վկայում են այն մասին, վոր յերեխաները հաճախ աշխատում են մեծահասակների հետ միասին, կատարելով միևնույն աշխատանքը, միևնույն բանվորական ժամանակում:

Ահա թե Համափութեանական պիոներական հավաքի պատգամավորներն ինչ էլին պատմում.

Պիոներ Վելիկ ժանը (Սիբիր).

«Մեր կոմունայում այս տարի յերեխաները աշխատում են 12 ժամ. աշխատում են հնձիչների վրա, իսկ այդ աշխատանքը շատ դժվար է: Բանում են և դաշտում, և՛ բանջարանոցում, և՛ գյուղատնտեսական մեքենաների վրա: Աշխատանքը լուսադեմին սկսվում է և մթնով վերջանում... Մինչու՞նչ աշխատանքի համար մեզ ավելի քիչ են վճարում, քան մեծահասակներին: Մեծ յերեխաները նույնպես շատ քիչ են ստանում»:

Պիոներ Սարոկինը (Բելբեյեվի կանտոն, Բաշկիրիայի հանրապետությունից) .

«Մեր տղերանց մեծ մասը տավարն են արածացնում. վեր են կենում առավոտյան ժամը 4-ին. 10—11-ին մեզ մոտ ճաշն է, իսկ ժամը 2-ին նորից քշում են տավարը: Բանում ենք մեծահասակների հետ միասին, մինչդեռ շատ ավելի պակաս ենք ստանում: Յես թեպետ և վեց ամիս է այդ կոմունայումն եմ, բայց վոչ յես և վոչ էլ ուրիշները աշխատավարձ չենք տեսնում»:

Պիոներ Գրեբենչիկովը (Նովոսիբիրսկու շրջան) .

«Սերմնացանի կամպանիայի ժամանակ մենք աշխատում էինք փոցխերով առավոտյան ժ. 5-ից. վերադառնում էինք ճաշին և ճաշից հետո նորից գնում էինք դաշար մինչև յերեկո և վերադառնում էինք այն ժամանակ, յերբ արդեն մութն էր լինում: Իսկ հիմա շատերը բանում են խոհարարներում, մինչև յոթը, հասակավորների հետ միասին, իսկ ռոճիկ հասակավորների պես չեն ստանում, և հետո, նույնիսկ տոն օրերին մեզ մոտ հանգիստ չի լինում»:

Աղջկերը մեզանում բանում են հասակավորների հետ միասին, բայց պակաս են ստանում»:

Պիոներ Յակիմովսկին (Տյումենսկի շրջան) .

«Մեզ մոտ յերեխաներն ու հասակավորները միատեսակ են աշխատում: Ամբողջ աշխատանքը բաժանված է կարգերի — ծանր ու թեթև: Տասը տարեկան յերեխան իր տասը ժամվա աշխատանքի համար ստանում է միայն 7 կոպեկ: Ճիշտ չե, վոր փոքր յերեխաները տաս ժամվա ընթացքում՝ հասակավոր տղամարդկանց հավասար՝ կատարում են նույն աշխատանքը»:

Յերեխաները ցաք ու ցրիվ և անկազմակերպ էին, իսկ հասակավոր կոլխոզնիկները այդ բացատրում էին նրանով, վոր իրենք հիմա յերեխաներով զբաղվելու զլուխ չունեն»:

Շնորհիվ նրա, վոր կոլխոզում վոչ-վոք յերեխաների աշխատանքի կազմակերպման հարցերով չի զբաղվել, առաջ է յեկել այն, վոր հիմա յեղ դեռ լսվում են առանձին ձայներ, վորոնք պնդում են, թե անհրաժեշտ է հասակավորների կոլխոզներում յերեխաների գյուղատնտեսական աշխատանքների համար հատկացնել հատուկ հողամաս, մանկական աշխատանքի կազմակերպման հիմնական ձևը համարելով յերեխաների կոլխոզը:

Յերեխաների կոլխոզները կոլխոզային շարժման աճման և ծավալման առաջին շրջանում խաղացին իրենց դերը, յերբ նրանք հսկայական ազդեցություն նշանակություն ունեցին: Բայց կոլխոզների ներսում յերեխաների կոլխոզները կենսազուրկ են դառնում և պետք է իրենց տեղը զիջեն այնպիսի մանկական կազմակերպություն, վորը իր աշխատանքը կառուցում է՝ յել-

ներով կոլխոզի ընդհանուր արտադրական պլանից, — նրա ներսում՝ առանց նրանից ջուկվելու:

Շարունակել յերեխաների կոլխոզի գոյության վրա պնդել, իր վարչությամբ, վերստուգիչ հանձնաժողովով, անդամակցական վճարներով, ինքնուրույն հողամասերով, — կոլխոզի ներկա պայմաններում, — կարող են միայն քաղաքականապես և գործնականորեն կարճատես մարդիկ, վորոնք չեն հասկանում, թե քաղաքականապես և գործնականորեն վորքան վնասակար ե՛լ յերեխաներին ընդհանուր արտադրական աշխատանքից և շինարարությունից կտրելը, վորովհետև չի կարելի յերեխաների գիտակից մասնակցությունը կոլխոզների գյուղատնտեսական արտադրության մեջ փոխարինել հասակավոր կազմակերպության անպետք ընդորինակմամբ, կոլեկտիվ տնտեսություն խաղալով:

«Մեզ մոտ ընդհանուր կոլխոզային շարժման հետ մեկտեղ կա յերեխաների կոլխոզային շարժում: Գյուղում պիտներ-ջուղատների նախաձեռնությամբ կազմակերպվում են այսպես ասած «յերեխաների կոլխոզներ», նրանք ունեն իրենց մուտքի վճարը, իրենց վարչությունը, այդ կոլխոզային «կապիտալով» գնում են ճաղարներ և հավեր և այնպես են համարում, վոր այդ հենց այն իսկականն է, ինչ վոր կապում է յերեխաների դաստիարակությունը արտադրության հետ: Այս կոլխոզային շարժման մեջ ևս կան յուրահատուկ աղավաղումներ:

Մոտ ժամանակներս յես «Пионерская Правда»-ում կարգացի մի տասնըմեկ տարեկան «հետախույզի» նամակը, վորում նա հայտնում է գայրույթով, վոր չքավորի զավակին, վորը գիմում եք սվել կոլխոզ

մտներու՝ չընդունեցին, բայց հարստի վորդուն ընդունեցին: Ճիշտ է ասում «Пионерская Правда»-ն վոր դա կոլխոզախաղ է:

Դա խաղ է, ճիշտ այնպես, ինչպես վոր մեր հեղափոխության առաջին ետապումն էր, — մանկական հանրապետություն-խաղ: Բայց այդ խաղը սկսել էր բավական լայն տարածում ստանալ և փորձում էր հակադրել կոլխոզը՝ դպրոցին, փորձում էր այդ կոլխոզը մանկական դաստիարակության հիմքը դարձնել:

Ինքնըստինքյան, այս վոտից-գլուխ տխմարությունը պոլիտեխնիզմի հետ վոչ մի ընդհանուր բան չունի: Պոլիտեխնիզմ կառուցել ճաղարների և հավերի վրա — դա վոչ մի բանի նման չի: Մեզ հարկավոր է այնպիսի պոլիտեխնիզմ և մանկական դաստիարակության այնպիսի մի կազմակերպություն գյուղում, վորը ծանոթացնի գյուղատնտեսական մեքենաների հետ, աշխատանքի կազմակերպման, տրակտորի, հողի մշակման հետ և այլն»:

(Համ ԿԿ (բ) ԿԿ կուլտպրոպի վարիչ ընկ. Ստեցկու ճառից՝ արտասանված ժողովրդական լուսավորության առթիվ հրավիրված Համամիութենական կուսխորհրդակցությանը, 1930 թ. մայիսին):

Վերը բերված կտորը ամբողջապես և լիովին հաստատում է յերեխաների կոլխոզների վերակազմելու անհրաժեշտությունը այնպիսի մի մանկական կազմակերպության, վորը ընդհանուր կոլխոզի մասը լինի, վորպեսզի յերեխաները հասակավորների հետ միասին լրջորեն զբաղվեն արտադրական աշխատանքով, և այդ հիման վրա աշխատանքային պրոցեսում ընդհանուր կրթական գիտելիքներ ստանան:

Կյանքը յերեխաների աշխատանքի միասնական կազմակերպչական ձև ե առաջադրում, վորպիսին հանդիսանում են յերեխաների ուսումնա-արտադրական բրիգադը:

Ինչպես են նրանք կառուցում իրենց աշխատանքը: Կոլխոզի կամ տնտեսության տերիտորիայի վրա, կոլխոզի վարչության առաջադրանքով, պիոներ-ջուկատի և դպրոցի հետ միատեղ ե կազմակերպվում մանկական ուսումնա-արտադրական աշխատանքը: Պիոներ-ջուկատի խորհուրդը դպրոցական ինքնավարության, ուսուցիչների և կոլխոզի վարչության ներկայացուցչի հետ միասին նշում և ընտրում ե աշխատանքի վորոշ շրջաններ և այն ընդհանուր-կրթական գիտելիքները, վորոնք պետք ե յերեխաների կողմից յուրացվեն իրենց աշխատանքի կապակցությամբ, յելնելով կոլխոզի արտադրական ծրագրից, մշակում ե ուսումնա-արտադրական աշխատանքների ծրագիր, սահմանում ե բրիգադների աշխատանքների հերթականությունը և ողակբրիգադները բաժանում ե ըստ այս կամ այն աշխատանքային գործի:

Յերեխաների ուսումնա-արտադրական բրիգադի հիմնական կորիզը պետք ե պիոներների բրիգադը լինի, վորի շուրջը պետք ե համախմբվեն ինչպես դպրոցական, այնպես ել շտվորող յերեխաները: Վորպես կանոն, բրիգադի գլուխ պետք ե կանգնի կամ ողակավարը կամ նրա ոգնականը, իսկ ողակի շուրջը մի քանի բրիգադներ կազմակերպվելու գեպքում, — կարող են պիոներներից կամ անկազմակերպ յերեխաներից ընտրվել հատուկ բրիգադներ: Աշխատանքային գործում բրիգադը անսլայման պետք ե կապվի հասակա-

վորների այն բրիգադի հետ, վորը աշխատում ե տնտեսության միևնույն ասպարիզում: Այդ հասակավոր բրիգադը ոգնում ե յերեխաներին իրենց գործնական աշխատանքի մեջ և բրիգադի ուսումնա-արտադրական աշխատանքի ղեկավարության համար առաջադրում ե փորձված մի ընկերոջ: Ամենից լավը այն ե, վոր բրիգադը կազմելիս՝ յերեխաների տարիքը նկատի առնվի և այդ ձևով կազմելով, նրանց դարձնել մշտական, և բրիգադը մի աշխատանքից մյուսը նետելիս, նրա կազմը չփոխել:

Արտադրական առաջադրությունը միասնաբար կատարելու հետ միաժամանակ, ողակը պետք ե անկազմակերպ յերեխաներին աստիճանաբար քաշի իր շարքը բը: Անհրաժեշտ ե հատկապես ընդգծել այն, վոր ողակը մնում ե պիոներական ինքնուրույն կուլեկտիվ, և կազմակերպում ե վոչ միայն յերեխաների աշխատանքը, այլ և իր մասսայական քաղաքական-կուլտուրական աշխատանքը՝ համաձայն իր ջուկատի սված պլանի:

Խոշոր կոլխոզներում, կամ կոլխոզային խմբերում, մանկական աշխատանքը կազմակերպում ե պիոներական բազայի խորհուրդը՝ բազայի դպրոցի հետ միասին: Յերեխաների ուսումնա-արտադրական աշխատանքի ծրագիրը վերջնականապես և ճշգրիտ կերպով կազմելու համար, անհրաժեշտ ե հավաքել բոլոր պիոներական ջուկատների և բազայի ղեկավարներին, կոլխոզի սվյալ տերրիտորիայի վրա դռնված բոլոր դպրոցների ուսուցիչներին, կոլխոզի կամ կոլխոզ խմբի վարչության, ռայոնական կամ գյուղական խորհրդի, կուսակցական և կոմյերիտական բջիջների ներկայա-

ցուցիչներին, ինչպես նաև պիտներ-ջոկատների և բազաների խորհրդների նախագահներին:

Բրիգադների աշխատանքների պրոցեսում, յերեխաների շահագրգռության դրսևորման այս կամ այն տեսակի աշխատանքի նկատմամբ արտահայտվող հակումի հիման վրա կարելի էլինի անցնել վորոշ նեղ մասնագիտության բրիգադների կազմավորման: Սակայն նման բրիգադների ստեղծմամբ չի նշանակում, թե յերեխաները պիտի չմասնակցեն ուսումնա-արտադրական ծրագրի այլ տեսակի աշխատանքներին:

Տարեց-տարի ավելանում է և պիտի աճի գյուղատնտեսության մեքենայացումը, վորը իր հերթին առաջ է մղում գյուղատնտեսական մեքենաների ուսումնասիրության անհրաժեշտության հարցը: Հաշվի առնելով յերեխաների մեքենաների վրա և մեքենաների մոտ աշխատելու անհնարինությունը, վորը պայմանավորվում է նրանց սարիքով, — անհրաժեշտ է մեքենաների ուսումնասիրությունը կատարել՝ բրիգադի կողմից առանձին գյուղատնտեսական գործիքների և տրակտորների վրա շեֆություն վերցնելով, վերանորոգումների ժամանակ յերեխաների կողմից ոգնություն ցույց տալով և այլն, — այնպես, վոր ծանոթանալով և ուսումնասիրելով մեքենաները, նրանք ձեռք բերեն անհրաժեշտ տեխնիկական ունակություններ և գիտելիք:

Յերեխաների ուսումնա-արտադրական բրիգադի շեֆությունը առանձին յերեխաների վրա, բացի դաստիարակչական նշանակությունից, պետք է նաև կոլխոզին ոգնի մեքենաների պահպանման գործում, ավելի հոգատար խնամք ցույց տալով դեպի մեքենաները, վորն իր հերթին այն հետևանքը կունենա, վոր մեքե-

նան քիչ կմաշվի և ընդհանրապես ավելի յերկար դործածելի կդառնա:

Յեվ այսպես, յերեխաների ուսումնա-արտադրական աշխատանքի գլխավոր առանձնահատկությունը կոլխոզում հանդիսանում է հասակավորների աշխատանքների կազմակերպման ձևերին համապատասխանող սխտեմը. — Յերեխաները կազմակերպվում են բրիգադների մեջ, վորոնց հիմքը կազմում է պիտներական ողակը:

Յերեխաների աշխատանքը փոքրիկ կոլխոզում կամ տնտեսության մեջ կազմակերպվում է պիտներական ջոկատի միջոցով, իսկ վորջ կոլխոզի տերրիտորիայի վրա, — պիտներական բազայի և նրա հետ մեկտեղ բազայական դպրոցի միջոցով: Նորից է հիշեցվում, վոր յերեխաների աշխատանքի կազմակերպման հիմքը յերեխաների ամենալայն ինքնագործնեյությունը պիտի հանդիսանա: Կոլխոզի վարչության արտադրական տրաշարության հիման վրա, իրենք յերեխաները կազմում են պլանը, վորի առանձին մասերը բաշխվում են բրիգադների միջև:

ՊԻՈՆԵՐՆԵՐԸ — ՅԵՐԵՒԱՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐՆ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐՆ ԵՆ

Պիտներական կազմակերպությունը պետք է հանդիսանա կոլեկտիվ տնտեսության մեջ յերեխաների ուսումնա-արտադրական աշխատանքի իսկական ղեկավարն ու կազմակերպիչը: Այդ պատճառով նրա վրա յի ընկնում բրիգադների ամենորյա աշխատանքների ղեկավարման ամենապատասխանատու պարտականությունը:

Կոլխոզի արտադրական աշխատանքում յերեխաների մասնակցութիւնը կազմակերպելիս՝ անհրաժեշտ է շոկատի կամ բազայի խորհրդում մանրագննին քննութեան առնել և մշակել հարցը, ծանոթանալ հասակավորների աշխատանքի կազմակերպման հետ, ծանոթանալ կոլխոզի արտադրական պլանի հետ, կապել դպրոցի և առաջին հերթին՝ ուսուցչութեան հետ և կապակցել դպրոցական ուսման պլանը կոլխոզի արտադրական պլանի հետ, վերակառուցել դպրոցական պլանն այնպէս, վոր նա համապատասխանի նոր խնդիրներին, հաշի առնել կոլխոզի աշխատանքների այն տեսակները, վորոնց մեջ կարելի կլինի յերեխաների աշխատանքը կիրառել՝ առանց յերեխաների ֆիզիկականը վնասելու, քննարկել բոլոր այն ձեռնարկումները, վորոնք կապված են յերեխաների արտադրական աշխատանքի հետ, կոլխոզի վարչութեան մեջ, և կոլխոզնիկների արտադրական խորհրդակցութիւններում: Կապել առնել այն յերեխաների քանակը, վորոնց կարելի յէ աշխատանքային գործի համար կազմակերպել՝ և այնուհետև միայն սկսել յերեխաների ուսումնաւարտադրական բրիգադներ կազմակերպելը:

Չոկատի ղեկավարութիւնը պետք է արտահայտվի վոչ միայն բրիգադների աշխատանքների մասին հաշվետվութիւններ լսելու մեջ, այլ պետք է հասկացվի ավելի լայն մտքով: Չոկատի և բազայի խորհրդի նիստերում, ողակային, շոկատային և բազային հավաքութիւններում հարկավոր է քննարկել բրիգադների գործնական աշխատանքը, խորհրդի նիստերին հրավիրելով յերեխաների ուսումնաւարտադրական բրիգադների ակտիվին, իսկ հավաքութիւններին — նաև վորջ

բրիգադներում կազմակերպված մասսային: Բացի դրանից, պիտներական շոկատները և բազաները պետք է պարբերաբար հրավիրեն արտադրական խորհրդակցութիւններ և կոնֆերենցիաներ: Իրենք, պիտներները պետք է հասակավորների արտադրական խորհրդակցութիւնների ակտիվ մասնակիցներ լինեն և նրանցում զրավեն բոլոր յերեխաներին ու կոլխոզնիկներին:

Յերեխաները պետք է քննութեան առնեն կոլխոզի արտադրական պլանը և առանձնապէս նրա այն մասերը, վորոնցում նախատեսվում է յերեխաների աշխատանքի ոգտագործումը: Հարկավոր է սովորութիւն դարձնել դպրոցի՝ աշխատանքային գործի հետ կապված ուսումնական ծրագրները քննել պիտներ-շոկատների հավաքութիւններում և դպրոցի յերեխաների փողովներում, վորովհետև յերեխաները անկասկած քիչ առաջարկութիւններ և գործնական նկատողութիւններ ու առաջարկութիւններ չեն մտցնում, — վորոնք պլանը կթարմացնեն, կճշտեն և կլավացնեն:

Պիտներական շոկատների անելիքների մեջ, կոմյետիտական բջիջների հետ մեկտեղ, պետք է մտնի՝ կազմակերպել յերեխաների համար սահմանված աշխատանքային որվա նորմերի կատարման ամենորյա ստուգումը: Շատ հաճախ կարող են պատահել յերեխաներին ծանր, վնասակար և վտանգավոր աշխատանքներում սգտագործելու դեպքեր: Պիտներների խնդիրն է, — հետևել մանկական աշխատանքի պաշտպանութեան, և վոր զլխավորն է՝ վոր վոչ մի դեպքում յերեխաների աշխատանքը չոգտագործվի վնասակար, վտանգավոր և ծանր աշխատանքներում:

Պիոներները վրա մեծ պարտականություններ են ընկնում նաև սոցիալիստական մրցում կազմակերպելու հարցում, — ինչպես ուսումնա-արտադրական բրիգադների միջև, այնպես էլ նրանց ներսում: Ջոկատի խորհուրդը և ողակը պետք է մշակեն մրցման ճիշտ թվական ցուցանիշներ, մրցումը հասցնել մինչև ամեն մի բրիգադն ու բրիգադայինը, կանոնավորել մրցման ճիշտ և մշտական հաշվառումը, քննարկելով նրա արդյունքները ողակների հավաքույթներում, խորհուրդներում, բրիգադներում, մրցման տախտակներ սարքելով և այլն: Այդ անելիս անհրաժեշտ է խուսափել բրիգադների և առանձին յերեխաների միջև ծագող անառողջ կոնկուրենցիայից, հիշելով, վոր սոցիալիստական մրցման հիմքը ուժեղների՝ թուլերին և յետ մնացածներին ոգնություն հասցնելն է: Հարկավոր է նմանապես հաշվի առնել յերեխաների՝ ուժից վեր ծանրաբեռնվելու հնարավորությունը, — վորպես արդյունք՝ սխալ հասկացված մրցումով չափազանց հափշտակվելու: Մրցման պայմանագրերը կնքելիս սխալ հաշվի առնվի վոչ միայն աշխատանքի ջանակը այլ և վորակը, — վորպեսզի յերեխաների մեջ կատարած աշխատանքի նկատմամբ ունեցած պատասխանատվությունը բարձրանա:

Պիոներները վոչ պակաս կարևոր մի խնդիրն էլ հանդիսանում է յերեխաներին գյուղատնտեսական փորձնական աշխատանքներում քաշելը, բրիգադներում գյուղատարության ծավալելը՝ գյուղատնտեսական աշխատանքի պրոցեսների պարզացման և առանձին մեքենաների ու գործիքների տեխնիկական կատարելագործման համար:

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՐՎԱ ՆՈՐՄԱՆԵՐԸ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այժմ անցնենք բանվորական որվա նորմավորման և աշխատանքի պաշտպանության հարցերին: Ընդհանրապես աշխատանքի և ավելի ևս յերեխաների աշխատանքի ճիշտ կազմակերպումը, — պահանջում է՝ յերեխաների բանվորական որը խիստ նորմավորել և դա այնպես բաշխել, վորպեսզի աշխատանքին անպայման հաջորդի հանգիստը: Հարկավոր է աշխատանքն այնպես կազմակերպել, վոր ֆիզիկական ուժի ամենանվազ սպառումով ստացվի ամենաշատ արտադրողականություն: Իմանալով, վոր յերեխաների կազմվածքը դեռ բավարար կերպով չի ամրացել, հարկավոր է նրանց համար աշխատանքի այնպիսի պայմաններ ստեղծել, վորոնք վոչ միայն վատ կերպով չազդեն նրանց կազմվածքի վրա, — այլ, ընդհակառակը, նպաստեն նրանց զարգացմանը:

Ինչը կարող է անընդունելի դարձնել յերեխաների մասնակցությունը արտադրական աշխատանքի մեջ և մանկական կազմվածքի զարգացման վրա վնասակար կերպով ազդել:

Ամենից առաջ, ողի բարեխառնությունը (սաստիկ տոթ կամ սառնամանիք), խեղդուկություն և փոշի: Նմանապես վատ է անդրադառնում յերեխաների կազմվածքի վրա ողի խոնավությունը, դղրոց, սաստիկ աղմուկ, չափազանց վառ լույս, խավար: Հարկավոր է խուսափել աշխատանքի անհարմար դրությունից և պողաներից, վորոնք կարող են ազդել դեռ չամրացած վոսկրային սխտեմի վրա:

Ընդհանրապես, յերեխաների աշխատանքի բաշխումը ըստ որերի կատարելիս, — հարկավոր է խիստ կերպով պահպանել հավասարաչափությունը, խուսափելով ինչպես աշխատանքի լրակատար բացակայությունից, այնպես էլ աշխատանքի չափազանց հավելումից: Անհրաժեշտ է հետևապես անսլայման հաշվի առնել աշխատանքի որեկան քանակը, և նրա բաշխումը ավելի կամ պակաս յերկարատև ժամանակաշրջանի վրա (չաբաթ, ամիս, տարի):

Յերեխաների աշխատանքի որեկան այնպիսի նորմաներ, վոր բավականաչափ ուսումնասիրված և ստուգված լինին, — չկան: Այդ պատճառով էլ վորպես հիմնական դրություն, հարկավոր է ընդունել հետևյալը:

1) 12 տարեկան յերեխաների համար որեկան ֆիզիկական աշխատանքի քանակը թույլատրելի յե 2—3 ժամ, հաշվի առնելով 2 — 3 ժամ դպրոցական աշխատանքի սովորական ժամերը: 12 — 14 տարեկան յերեխաների համար, վորոնք սովորում են նորմալ դպրոցներում, — որեկան ֆիզիկական աշխատանքի քանակը թույլատրելի յե 4—5 ժամ, նկատի ունենալով նրանց ուսման 3 ժամերը. (այդ հասակի շտվորող յերեխաների համար, վորոնք արդեն անմիջականորեն աշխատում են կոլխոզում, հարկավոր է ղեկավարվել կոլխոզներում յերեխաների և պատանիների աշխատանքի մասին Համ ԼԿՅԵՄ Կենտկոմի կողմից մշակված ժամանակավոր կանոններով):

Վոչ մի դեպքում չի կարելի բանվորական որվա տևողությունը ավելացնել մինչև 12 տարեկան յերեխաների համար, — մասնավորապես գյուղատնտեսական աշխատանքի բուռն միջոցին: Չանց առնել այդ

կանոնը կարելի յե միայն չափազանց արտակարգ հանգամանքներում (տարերային դժբախտություն):

8-ից մինչև 9-ը տարեկան յերեխաները մի անգամից աշխատում են վոչ ավել քան մի ժամ, 9-ից — 10-ը՝ վոչ ավել քան $1\frac{1}{2}$ ժամ, 10-ից — 12-ը՝ 2 ժամ, 13-ից — 14-ը՝ $2\frac{1}{2}$ ժամ:

2) Իսկ յեթե աշխատանքային պրոցեսը մեծ լարում է պահանջում, ապա աշխատանքի խտացումը, վոր հասակավորների համար հավասար է 80%-ի (այսինքն 20%՝ զնոււմ է հանգստյան դադարներին) 8 — 12 տարեկանների համար 40%-ից ավել չպիտի լինի, իսկ 12 — 14 տարեկանների համար՝ 55 — 60%-ից:

Անցնենք աշխատանքի այն տեսակներին, վորոնք սահմանափակվում և միանգամայն արգելվում են.

ա) աշխատանքային այնպիսի պրոցեսներ — վորոնք պահանջում են միանների հատուկ աշխատանք, որինակ, միայն ձեռքերի, — 14 տարեկանից առաջ չեն թույլատրվում: Խոշոր ծանրություններ բարձրացնել կամ տանելը թույլատրելի յե միայն սեռական լրիվ հասունության հասակում:

բ) յերեխաները ամառը պիտի աշխատեն՝ առավոտյան մինչև ժ. 8-ը և յերեկոյան 6-ից վոչ առաջ:

գ) քնելու ժամերի ընդհանուր քանակը պիտի լինի՝ մինչև 10 տարեկանը՝ 10 ժամ, մինչև 14 տար. 9 ժամ:

դ) աղջիկները զաշտանի ժամանակ ծանր աշխատանքից պիտի ազատվեն:

յե) ուժեղ տոթերին, տաք քամիներին, անձրևային, սառնամանիքի յեղանակներին յերեխաների աշխատանքը միանգամայն վերանում է: Կտրականապես արգելվում են զիշերային աշխատանքներ:

զ) աշխատանքը կատարելիս յերեխաները պիտի հազնեն ըստ կարելիութեն թեթև զգեստ ողի ջերմությանը համապատասխանող, ամառը հնարավորին չափ միայն տրուսիկներով:

ե) նույն աշխատանքները ձմռանը (քուրքով և վալենկաներով) կրճատվում են ժամանակի վոչ պահաս քան մի յերրորդով:

Միանգամայն չեն թուլատրվում հետևյալ աշխատանքները.

ա) մինչև 12 տարեկան հասակի յերեխաներին վոչ մի մեքենայի վրա ինքնուրույն աշխատանք չի թուլատրվում. 12-ից մինչև 14 տարեկանների համար հնարավոր ե միայն պարզ մեքենաների (հնձիչի, կալսիչի և այլն) վրա նստած աշխատանք.

բ) չի թուլատրվում մինչև 14 տարեկանների համար վարը, մանավանդ խոպան հողերում, և հողի մշակման այլ ծանր տեսակները.

գ) արգելվում ե բարձրացնել և կրել 16 կիլոգրամից ավելի ծանրություններ (մինչև 15 տարեկանների համար) մեքենաների ծանր լծակների արագ տեղափոխության, ինչպես նաև խոտի և դարմանի դիզելու, բառնալու աշխատանքներ.

դ) չի թուլատրվում մինչև 18 տարեկանների համար աշխատանք տրակտորների վրա, վորովհետև նա կապված ե մշտական աղմուկի, փչացրած ողի, տոթի (շարժիչից), փոշու և ջղերի ուժեղ լարման հետ.

յե) մինչև 14 տարեկաններին չի կարելի փայտ կտրելը, սարթ խոտերի ձեռքի քաղը, ձեռքի կալը, ձեռքի ցանցը և ծանր հողերի փորելու աշխատանքները.

զ) հանքային պարարտանյութեր սփռելը և (առանց

հատուկ հսկողության) քիմիական թունավոր նյութերով վնասատուների դեմ պայքար մղելը.

ե) վերջապես չեն թուլատրվում նշանակալից չափով ֆիզիկական և մտավոր աշխատանքի լարում պահանջող այն աշխատանքները, վորոնք կապված են անբնական կամ անհարմար դիրքի հետ:

Գյուղատնտեսական աշխատանքով զբաղվող յերեխաները պետք ե պարբերաբար բժշկական քննության յենթարկվեն: Բայց քանի վոր բժշկական գործի ցանցը դեռևս շատ անբավարար ե, և իհարկե, մոտակա տարիներում դեռևս չի կարող սպասարկել բոլոր յերեխաներին, — ասպա անհրաժեշտ ե կազմակերպել յերեխաների ընտրական խմբակների պարբերական քննության գործը, հաշվի առնել աշխատանքի ազդեցությունը նրանց առողջության և ֆիզիկական զարգացման վրա, ինչպես նաև ժամանակավորապես հանգստի և բուժման կարոտ յերեխաներին աշխատանքներից ազատել:

Յերեխաների առողջացման համար և ավելի առողջաբար պայմաններում հանգստի հնարավորություն տալու համար, անհրաժեշտ ե ավելի ուժեղ և անտեսապես ամրացած կոլտոգներում կազմակերպել առողջաբար հրապարակներ և այլ առողջապահական ձեռնարկումներ:

ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎՃԱՐԸ

Կոլտոգների հիմնական մասապյում, — ուր դեռ կենցաղը չի համայնացված, յերեխաների ապահովության խնդիրը կարևոր նշանակություն ունի:

Արդեն հիմա, նույնիսկ արտելներում, հարկավոր ե ձեռք բերել յերեխաների ապահովությունը հասա-

րակութեան հաշիւին, վորով կոլխոզի կոլեկտիվը կկարողանա յերեխաների հասարակական դաստիարակութեան հիմքը դնել: Գրանով իսկ վողջ կոլխոզային հասարակայնութիւնը կոլխոզային նոր կաղերի պատրաստման գործին պատասխանատու կդառնա:

Այժմ կոլխոզի կանոնադրութեամբ նախատեսնվում է անաշխատունակների ապահովումը, հատուկ կազմակերպվող ֆոնդի հաշիւին: Մասնակի չափով նույն այդ ֆոնդից պիտի ապահովել նաև յերեխաներին: Անհրաժեշտ է հաշոդեցնել հատուկ ֆոնդի ստեղծման գործը մինչև 12 տարեկան հասակի յերեխաներին ապահովելու համար, վորով յերեխան ընտանիքից տնտեսապես անկախ կլինի, և չափազանց բեռնվածութիւնից ապահով հնարավորութիւն կունենա ավելի լավ սովորել և աւտիվ կերպով մասնակցել կոլխոզի տնտեսական և կուլտուրական կյանքին:

Այն յերեխաներին, վորոնք տարրական դպրոցը չեն վերջացրել մինչև 12 տարեկանը, — պետք է ապահովել մանկական ֆոնդից, այնքան, ինչքան պետք է դպրոցը ավարտելու համար:

Ուսուցիչները և պիոներ աշխատողները պետք է այս հարցը կոլխոզի վարչութեան նիստերին, կոլխոզի ընդհանուր ժողովներին հարուցեն: Առանց կոլխոզի կանոնների հասարակական կարծիքը կազմակերպելու, մոբիլիզացիայի յենթարկելու, առանց կուսակցական և կոմյերիտական բջիջների ակտիվ պաշտպանութեան, դժվար է ձեռք բերել յերեխաների տնտեսական ապահովութիւնը: Իսկ դա ինչ գնով էլ լինի պետք է անել:

Յերեխաների աշխատանքը, ինչպէս և ամեն տեսակի արտադրական աշխատանքը, պիտի վարձատրվի քանի

վոր յերեխաները կատարում են կոլխոզի աշխատանքների մի մասը:

Յերեխաներին հասանելի աշխատավարձը պիտի վճարվի վոչ թէ անհատականորեն, այլ ամբողջ կոլեկտիվին, վորը մասնակցում է արտադրական աշխատանքին և պիտի ծախսվի մանկական կոլեկտիվի ընդհանուր կուլտուր-կենցաղային և տնտեսական կարիքների բավարարման վրա: Այդ աշխատավարձը հիմնականում պիտի գնա մանկական կենցաղի համայնացման, մանկական հասարակական սննդի կազմակերպման, մանկապարտեզների և այլն գծով: Այդ պատճառով էլ մինչև 12 տարեկան յերեխաների աշխատավարձը պիտի մտնի ապահովման ֆոնդը, հատկացվի մանկական հրապարակներին և ծախսվի (կոլխոզի վարչութեան միջոցով) նախահաշիւային կարգով վերոհիշյալ կարիքների համար: Տնտեսական տարվա վերջում կոլխոզի վարչութիւնը պիտի մանկական կոլեկտիվի առաջ հաշվետվութիւն կատարի, ինչպէս յերեխաների տնտեսական ապահովութեան, այնպէս էլ կուլտուր-կենցաղային սպասարկութեան մասին: Գալիք բյուջետային տարվա համար նախահաշիւ կազմելիս, յերեխաները նույնպէս պիտի մասնակցեն նախահաշիւի կետերի կազմելու քննութեանը, վորոնք իրենց են վերաբերում:

Յերեխաների աշխատանքը վարձատրելիս պիտի յերնել հետևյալ հիմնական դրութիւնից, — աշխատած ժամանակի հաշիւից հավասար աշխատանքի համար՝ հավասար վարձատրութիւն: Ամեն տեսակի հատուկ տարիֆային ցանցերի ստեղծումը յերեխաների համար՝ կտրականապէս արգելվում է այնպէս, ինչպէս նաև

աշխատանքի գործարքային վճարման ձևի
կիրառումը:

ՅԵՐԵՒԱՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿՈԼԵՈՉԻ ՏՆՏԵՍՈՒՅՅԱՆ ԶՆԱՆՐԱՅՆԱՅՎԱԾ ՄԱՍԵՐՈՒՄ

Յերեխաների աշխատանքը կազմակերպելիս յեր-
բեք չպետք է մոռանալ, վոր արտելներում, վորոնք
ներկա ետապում հանդիսանում են կոլխոզային շարժ-
ման հիմնական ձևը, — դեռևս հանրայնացված են գյու-
ղատնտեսության միայն հիմնական ճյուղերը (գլխա-
վորապես հացահատիկայինը), և արտադրության կա-
րևորագույն միջոցները: Այդ պատճառով էլ յերեխա-
ների աշխատանքը կոլխոզի առանձին գյուղացիական
տնտեսություններում դեռևս կպահպանվի (տնային
տնտեսության մեջ ոժանդակ աշխատանքներ, կամ
աշխատանքներ բանջարանոցում ու այգում, տավար
արածացնել, մանկիկներին հսկել և այլն):

Քանի վոր հիմնական բանվորական ուժը զբաղ-
ված է լինելու տնտեսության հանրայնացված ճյու-
ղերում, կարող է ձգտում առաջ դալ՝ «տնային» աշ-
խատանքների մեծ մասը յերեխաների վրա բառնալ, —
մինչև իսկ մանկական վարձու աշխատանքի կիրառումն:

Նման դրությունը ստիպում է չափազանց լուրջ
դնել առանձին կոլխոզնիկների տնտեսություններում
յերեխաների աշխատանքի կազմակերպման խնդիրը:
Իհարկե, այստեղ մի ամբողջ շարք անհաշողություն-
ների և դժվարությունների հետ բաղխվելը, — անխուսա-
փելի յե: Ուսումնա-արտադրական բրիգադների միջոցով
շատ բան կարելի յե ձեռք բերել, բայց այնուամե-
նայնիվ յերեխային լիովին չենք կարող ընտանիքից

կախված լինելուց ազատել: Ծնողները իրենց տնտե-
սության չհանրայնացված ճյուղերում կողտագործեն
յերեխաների աշխատանքը և այստեղ կարելի յե հան-
դիպել յերեխաների ծայրահեղ ծանրաբեռնվածության,
վորը հասնում է շահագործման:

Բայց այստեղ ևս յերեխաների բրիգադները հսկա-
յական նշանակություն են ստանում, վորոնց միջո-
ցով կարելի յե ոգնության հասնել սակավազոր տնտե-
սություններին բանջարանոցների, այգիների մշակման,
տնային թռչունների խնամքի և այլ միջոցով: Բրի-
գադները կարող են իրենց վրա վերցնել տնտեսու-
թյունների վորոշ մի խմբին կոլեկտիվ կերպով ոգնելու
գործը: Դա վոչ միայն ընտանիքի կողմից ծանրա-
բեռնված յերեխաներին բեռնաթափ կանի, այլ և քա-
ղաքական եֆֆեկտ կտա, վորովհետև գործնական աշ-
խատանքներով կոլեկտիվ աշխատանքի առավելությունն
ապացուցելով, նրանք կնպաստեն գյուղատնտեսության
չհանրայնացված տեսակների հանրայնացման: Զուտա-
ների խորհուրդները շրջկոմների հետ միասին պիտի կանո-
նավորեն բրիգադների աշխատանքը տնտեսության
անհատական մասերում և ծրագրված կերպով սպա-
սարկեն նրանց, իրենց ուսումնա-արտադրական ծրա-
գրներում նախատեսելով այն:

Պիտներները կոմյերիտականների հետ միասին պետք
է վճռապես հանդես գան ընդդեմ մանկական վարձու
աշխատանքի, մոբիլիզացիայի յենթարկելով պայքարի
այդ ձևակատում ամբողջ կոլխոզային հասարակայնու-
թյունը, և կովեն՝ ծնողների տնտեսության մեջ յե-
րեխաների աշխատանքի պաշտպանության համար,
թույլ չտան աշխատանքի չափից դուրս ծանրաբեռն-

վածութիւնն, իրենց վրա վերցնելով աշխատանքի կազմակերպման նախաձեռնութիւնը:

Իրենք, յերեխաները կոմսոմոլի և պիոներներին դեկավարութեամբ, ուսուցիչների մասնակցութեամբ, պիտի գյուղխորհրդին ոգնեն՝ մանկական աշխատանքը ընտանիքում կիրառելու գործում հսկողութիւնն ռեննալու համար, մտքի լիզացիայի յենթարկելով վողջ կոլխոզային հասարակայնութիւնը կոլեկտիվ հսկողութեան համար:

Կոլխոզային շուկատավարի խնդիրները նշանակալից չափով բարդանում են: Այստեղ նա հանդիսանում է պիոներների դեկավար վոչ միայն այն մտքով, վոր պիտի յերեխաներին կազմակերպի քաղաքակաշն հարցերի շուրջը, այլ և կանոնավորի ամբողջ շուկատի աշխատանքը՝ կոլխոզի բոլոր յերեխաներին արտադրական աշխատանքին մասնակից դարձնելու համար:

Մանկական աշխատանքի լավ կազմակերպիչ լինելու համար, պիտի իմանալ կոլխոզի աշխատանքի կազմակերպութիւնը: Ամեն մի կոլխոզ պիտի ուսումնասիրի իր կոլխոզի աշխատանքի կազմակերպումը և ծանոթանա հարևան կոլխոզների աշխատանքի կազմակերպման հետ: Բավական չէ զիտենալ ներքին կարգավորման կանոնները, վորոնք աշխատանքի կազմակերպման հիմքն են տալիս: Այս հարցը պետք է ուսումնասիրել հասակավորների փորձի վրա, և ապա, յերեխաների հասակին համապատասխան ուղղումներ մտցնելով, տեղափոխել յերեխաների մասսայի մեջ:

Յերեխաների աշխատանքի կազմակերպման հարցի մշակման մեծ մասը ընկնում է կոլխոզի վրա: Նա շատ դժվարութիւններ պիտի հաղթահարի, հանդիպի անբարյաքակամ վերաբերմունքի, կամ քաշքուկի, կամ

յերեխաներին գյուղատնտեսական արտադրութեան մեջ ներգրավելու նկատմամբ վոչ լուրջ վերաբերմունքի:

Նոր խնդիրներին համապատասխան, պիտի բարձրանա կոլխոզի դերը դպրոցում, ուր նա հենվելով ակտիվ ընկերների վրա, պիտի պոլիտեխնիկական աշխատանքի հարցեր բարձրացնի: Պիոներների և վողջ դպրոցական մասսայի հետ մեկտեղ, կոլխոզը պիտի թափ տա ուսուցչութեանը և ոգնի նրան դպրոցը վերակառուցելու, դրա համար մտքի լիզացիայի յենթարկելով կոլխոզային հասարակայնութեանը: Պետք է դպրոցը, ինչպէս նաև պիոներ-շուկատը, կապվեն կոլխոզի կյանքի հետ, ապրեն նրանով և չմեկուսանան իրենց նեղ շրջանակներում: Իսկ դրան կարելի յէ համենլ այն դեպքում, յերբ պիոներ կազմակերպութեան ազդեցութիւնը դպրոցում կամրանա: Այստեղ շատ բան է կախված կոլխոզի աշխատանքից և այն գործնական ոգնութիւնից, վոր նա պիտի ստանա կոմյերիտ բջիջից և պիոներ բյուրոյից:

Կոլխոզը այնպիսի մի լուրջ հարցում, վորպիսին աշխատանքի կազմակերպումն է, չի կարող իր գլխի գործել: Պիտի կապվել մոտակա գյուղատնտեսական կայանի, բժշկի, գյուղատնտեսի հետ, կարգալ հարկավոր գրքեր, և միայն այդ դեպքում կարելի յէ հաջող կերպով լուծել այդ կարևորագույն խնդիրը:

ԴՊՐՈՑԸ ՅԵՎ ՈՒՍՈՒՑԻՉԸ ԿՈՒԼԽՈՉՈՒՄ

Մենք արդեն ասացինք, վոր դպրոցը կոլխոզում պիտի մասնակից լինի կոլեկտիվ տնտեսութեան վողջ հասարակական և արտադրական կյանքին: Միայն այդ դեպքում նա կկարողանա կոլեկտիվացման բազայի վրա վերակառուցվող գյուղական տնտեսութեան սոցիալիստական

շինարարութեան խնդիրներին համապատասխանել: Այդ պատճառով հենց հիմնիկներից պիտի սկսել դպրոցական ծրագրերի արմատական վերանայումը, դրանք կառուցելով այն հիման վրա, վոր յերեխաները մասնակից են արվելու կոլխոզի աշխատանքին, կոլխոզի քաղաքական, տնտեսական և կուլտուրական կյանքին: Ուսման ձևերը պիտի վերանայվեն և հարմարեցվեն աշխատանքի կազմակերպման ձևերին, այսինքն՝ բրիգադային սխտեմին, պիտի կապակցվեն յերեխաների աշխատանքի ժամանակի հետ և այլն:

Վորպեսզի ուսուցիչը կարողանա իրագործել նոր դպրոցի վերակառուցման հետևանքով իր առաջ կանգնած նոր խնդիրները, վորպեսզի նա կարողանա դառնալ յերեխաների արտադրական աշխատանքին մասնակից կազմակերպիչներից մեկը և այդ հիման վրա կազմակերպի դպրոցի ամբողջ աշխատանքը, — նա պետք է յերեսով դեպի կոլխոզի արտադրական խնդիրները դառնա և ընդհուպ մոտենա նրանց: Ուսուցիչը պիտի սոցխալիստական շինարարութեան ակտիվ մասնակիցը դառնա, սերտ կելուով կապվի կոլխոզային հասարակայնութեան հետ նրա բոլոր աշխատանքում, ոգնի կոլխոզի ներքին կյանքի կազմակերպմանը և նրա ամրապնդմանը: Կուսակցութեան և կոմյերիտմիութեան հետ միասին ուսուցիչը պիտի ակտիվ պայքար մղի կուլակութեան և կուլակայինների դեմ, մերկացնելով խորթ սրամադրութունները և այն վորձերը, վոր ուղղված կլինեն խախտելու վստահութունը դեպի կոլխոզները: Միայն այդ ձևով, կոլխոզի և կոլխոզային հասարակայնութեան հետ սերտ կապվելով, ուսուցիչը կարող կլինի դպրոցի իսկական վերակառուցման գործը ապահովել:

Վ Ե Ր Ջ Ա Բ Ա Ն

Մանկական աշխատանքի կազմակերպումը կոլխոզում, — միանգամայն նոր և դեռևս անբավարար չափով մշակված հարց է: Այդ պատճառով անհրաժեշտ է, վոր կոլխոզների դպրոցական աշխատողները, պիտաներական կոլվարները և ամբողջ կոլխոզային հասարակայնութունը սկսեն այդ հարցերի գործնական մշակումը, և հենց այս տարվանից ծավալեն յերեխաներին արտադրական աշխատանքում ներգրավելու լայն աշխատանքը:

Միայն այդ հարցերին վերաբերյալ հավաքված նյութերի կոլեկտիվ ստուգման հիման վրա, կարելի կլինի լուրջ կերպով մշակել յերեխաների աշխատանքի կազմակերպման հարցերը:

Այդ պատճառով խնդրվում է բոլոր կոլվարներին, լուսաշխատավորներին, վորոնք յերեխաների աշխատանքը կոլխոզում կազմակերպելու և դպրոցի վերակառուցման պրակտիկ փորձ ունեն, ուղարկեն իրենց նյութերը հետևյալ հասցեյով. —

Москва. 34. Мертвый пер. д. 8, Центральный дом детского коммунистического движения.



15 407.

Цена 15 к.
У. 13.



И. СЕЛЯНИН
**Организуйте детский
труд в колхозе**
(пер. с русск.)

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР.
Москва, центр, Никольская, 10.